Վեհափառ Հայրը պարտիզումն էր։ Մօտեցայ, ձեռքը համբուրեցի. ինչ որ օձի պատմութիւն պատմեց, շատ անորոշ կերպով։

Անցեալ օր, ասեց մօտաւորապէս, նստած էի այստեղ, այս փոքրիկ պարտէզում, այս աթոռի վրայ, այսինչ վարդապետն էլ մօտս էր։ Մէկ էլ տեսայ՝ մի օձ, երկար, կանանչ մի օձ, որ սողում էր դէպի ինձ։ Վեր թռայ եւ գաւազանով փախցրի։ Իսկ մօտս գտնուող վարդապետը ոչ միայն տեղից չշարժուեց, այլ հանդիստ ձայնով յայտարարեց. «Ես վաղուց տեսել էի օձին, բայց կարեւորութիւն չտուի»...

Վեհափառը պատմեց, ու իր ծերացած աչքերի փայլուն շղարշի տակից նայեց ինձ վախով եւ զայրոյթով։

Տեսե՛լ էր եւ ոչինչ չէր ասել։

* * *

Պոլսոյ, Առնաուտ Քէօյի մի դեղագործ, որ հիմա վարդապետ է դարձել, ինձ տեսաւ թէ չէ ուրախացաւ, ծիծաղեց եւ բարձր ձայնով. «Օ՜, Զարեան էֆէնտի, ամա՜ն, խօշ գելդիւն, էի մի սիւզ»...

Մայր տաճարի պատի վրայ վտանգաւոր ճեղք նկատեցի։

Ստիպուած, ասացին ինձ, եռեւի երկու դմբէթները պիտի քանդեն, վտանգի առջեւը առնելու համար։

* * *

Նկարիչ Տ.-ն այստեղ է ապրում։ Եօթ կատու ունի եւ տասն եւ չորս հաւ։ Հայ ոճի մասին է խօսում։ Արտանկարել է խաչքարեր, ձեռագիրներ եւ Մայր Տաճարի փայտէ նմանողութիւնն է շինել։

Ամէն ինչ կորչում է, ասում է, գոնէ այդ պահենք։

Իր արտանկարների համար Մոսկուայի Հղիտեմ ի՞նչ հնագիտական ընկերութիւնից մեդալ է ստացել, եւ այստեղ, Հողժողկոմը իրեն բաղ (այգի) է խոստացել։ Ուրախ է, կով պիտի պահի։

* * *

Վանքի տպարանում դասագրքեր են տըպում։ Զեն հասնում։ Հայ ժողովրդի գիտութեան ծարաւը շատ մեծ է։

Այս մարդիկ,— ասում է տպարանապետը ցոյց տալով դէպի վանքը,— դարերով ժողովուրդը տգիտութեան մէջ են պահել, լա՛ւ է որ եկանք հասանք։

Էջմիածնի ճեմարանի նախկին աշակերտների եւ ուսուցիչների խօսքերն են, որ այսօր, տգէտ այս մարդիկ կրկնում են,— ասում է մի Սրբազան։

Գրքերի էջերից Էնդելսը ծիծաղում է։

* * *

Վերադառնա՛մ։

Բայց վերադառնամ ո՞ւր։

Վաղարշապատի փողոցները նայում են դոյնը նետած կարմիր մի դրօշակին։ Ցեխ է։ Արարատը ճակատիս սառ է դնում։ Ցուրտը սաստկացնում է մինակութիւնս, եւ ոչ մի տեղ չեմ ուզում գնալ։

Վանքի բակի մեծ դուռը միշտ բաց է։ Ամէն ոք ամէն տեղ մտնելիս։

Ո՞ւր է այն հայ կինը, որ մի քանի տարի առաջ աղօթում էր տաճարի դռան առջեւ։ Ռաֆայէլի մաղոնան եւս անհետացել է։ Ո՞ւր են, ո՞ւր են...

* * *

Նկարիչ Տ.-ն դուրս է եկել փողոց եւ իր կատուները ներս է կանչում։ Մի օր մէկը կորած է եղել. կինը եւ ինքը ամբողջ Վաղարշապատը տակնուվրայ են արել, տնէ տուն մտնելով, միլիցիաներին դիմել, փող խոստացել։ Ի՞ զո՞ւր... Միւս առաւօտը Մայր Եկեղեցւոյ առջեւից անցնելու ժամանակ մէկ էլ մլաւոցի ձայն են լսում։ Կատուն եկեղեցու մէջն է եղել։

— Տօ, էդպէս էլ անսիրտ մարդիկ, խեղճ կենդանին փակել են եկեղեցու մէջ եւ թէպէտ գիտեն, որ կին եւ երիկ ամբողջ գիշեր չեն քընել, ոչինչ չեն ասում։

Պատմում է ու զայրանում։

Օձը, կատուն, կաթողիկոսը, նկարիչը...

Չէ՛, վերադառնամ։

Վաղը Ծնունդ է։

(Շարունակելի)

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան